ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

**ԹԱԼԻՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ**

REPUBLIC OF ARMENIA
ARAGATSOTN REGION

**MUNICIPALITY OF TALIN**

***ՔԱՂԱՔԱՊԵՏ***

~~377730~~ 0501, ք. Թալին, Գայի - 1
Հեռ. (0249) 2-25-46, 2-24-19
Ֆաքս 0249-2-31-38

377730, Talin
Tel.: (0249) 2-25-46, 2-24-19
Fax: 0249-2-31-38

№ 056/117

«04» 08 2011 թ.

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Ձեզ ենք ուղարկում Թալին քաղաքային համայնքի ավագանու թիվ 6 նիստի թիվ 17, 18 որոշումները:

ԱՌԴԻՐ 3 թերթ:

ԹԱԼԻՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Մ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ելք ———
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժին
«08» 08 2011 թ.
Մուտք № 7758

ՈՐՈՇՈՒՄ թիվ 17

ԹԱԼԻՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՉՈՐՍԸ ՕԳՈՍՏՈՍԻ ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՏԱՍՆՄԵԿ ԹՎԱԿԱՆԻ

ԹԻՎ 6 ՆԻՍՏԻ

Թալինի քաղաքային համայնքի
2011 թվականի առաջին կիսամյակում
եկամուտների և ծախսերի կատարման մասին:
«Զեկուցեց՝ Մ. Մնացականյան»

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 69-րդ և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածներով
Համայնքի ավագանին որոշում է՝

Թալինի քաղաքային համայնքի 2011 թվականի բյուջեի առաջին կիսամյակի եկամուտների և ծախսերի կատարման մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

Որոշումն ընդունվել է միաձայն

Թալինի քաղաքային համայնքի ավագանու անդամներ՝

1. Վարանցով Աղամյան
2. Արամ Արամյան
3. Կարեն Եղիազարյան
4. Ռադիկ Հակոբյան
5. Անահիտ Հարությունյան
6. Արթուր Խաչատրյան

ԹԱԼԻՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ Մ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ թիվ 18

ԹԱԼԻՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՉՈՐՍԸ ՕԳՈՍՏՈՍԻ ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՏԱՍՆՄԵԿ ԹՎԱԿԱՆԻ

ԹԻՎ 6 ՆԻՍՏԻ

1. 5-րդ համահայկական խաղերին
Թալինի քաղաքային համայնքի
մարզիկների մասնակցությունը ապահովելու համար
համայնի 2011 թվականի տարեկան բյուջեում
փոփոխություն կատարելու մասին
«Զեկուցեց Մ. Մնացականյան»

2. Անասնաբուժական ծառայությունը
համայնքին փոխանցելու կապակցությամբ
համայնքի 2011 թվականի տարեկան բյուջեում
փոփոխություն կատարելու մասին
.Զեկուցեց Մ. Մնացականյան»

1. Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33 հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով, 5-րդ համահայկական խաղերին Թալինի քաղաքային համայնքի մարզիկների մասնակցությունն ապահովելու համար անհրաժեշտ տրանսպորտային, սննդի և սպորտային համազգեստ ձեռք բերելու, ֆինանսական ծախսերը կատարելու համար.

Համայնքի ավագանին որոշում է՝

Վարչական բյուջեի եկամտային մասում ավելացնել /տող 1393/ օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ 1500.0 հազար դրամ:

Բաժին 08 խումբ 1 դաս 1 հանգստի և սպորտի ծառայություններ ավելացնել 1500.0 հազար դրամ:

2. Հիմք ընդունելով ՀՀ Գյուղատնտեսության նախարարի գրությունը ՀՀ Արագածոտնի մարզպետին և ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33 հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով, անասնաբուժական ծառայությունը համայնքին փոխանցելու կապակցությամբ, համայնքի բյուջեում համապատասխան ֆինանսավորում նախատեսելու համար.

Վարչական բյուջեի եկամտային մասում ավելացնել /տող 1342/ պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ 720.0 հազար դրամ:

Համայնքի վարչական բյուջեի ծախսային մասում ավելացնել բաժին 04 խումբ 2 դաս 1 գյուղատնտեսություն 720.0 հազար դրամ /անասնաբուժական ծառայություններ/:

Որոշումն ընդունվել է միաձայն

Թալինի քաղաքային համայնքի ավագանու անդամներ՝

1. Վարանցով Ադամյան
2. Արամ Արամյան
3. Կարեն Եղիազարյան
4. Ռադիկ Հակոբյան
5. Անահիտ Հարությունյան
6. Արթուր Խաչատրյան

ԹԱԼԻՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ